ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՇՏԱՐԱԿԻ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

«Ֆոտոն» ՍՊԸ տնօրեն
Ն. Պետրոսյանին
/ ՀՀ, Ք. Երևան Ռոստոմի 58 /

«12» դեկտեմբեր 2023թ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև 31 օգոստոսի 2023 թվականին կնքված N **ՀՀԱՄԳՐՈ4-ԳՀԱՊՁԲ-23/02-3** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում «Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին Արագածոտնի մարզ ք. Աշտարակ Նարեկացու 79 հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Վերոնշյալ Պայմանագրի N 2 հավելվածով «Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարումը սահմանված է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2023թ:

Նշված Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝

«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆոտոն» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել «Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 2023 թվականի դեկտմբերի 4-ի պահանջագիրը, հետևաբար ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /լրիվ/ հրաժարվում է «Ֆոտոն» ՍՊ ընկերության հետ կնքված N ՀՀԱՄԳՐՈ4-ԳՀԱՊՁԲ-23/02-3 ծածկագրով գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները։

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 45780 (քառասունհինգ հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ և 30520 (երեսուն հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ «Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի ՀՀ ֆին. նախ. Գործառնական վարչություն Հ/Հ **900448000118** հաշվեհամարին փոխանցելու նպատակով։

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին։

Ընդունել ի գիտություն.

եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում

ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ԱՇՏԱՐԱԿԻ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՆԻԿՈԼՅԱՆ